ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 687-Ա

<<19>> օգոստոսի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ OPEL OMEGA 2.6 ՄԱԿՆԻՇԻ 851 GR 61 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ, ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱԼԵՔՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 30-ի N 62-Ա որոշումը և 2024 թվականի օգոստոսի 16-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանում կայացած համայնքի սեփականությունը հանդիսացող 1993 թվականի արտադրության OPEL OMEGA 2.6 մակնիշի 851 GR 61 պետհամարանիշի փոխադրամիջոցի հաճուրդ վաճառքի արդյունքների վերաբերյալ ճուրդային հանձնաժողովի կողմից կազմված 2024 թվականի օգոստոսի 16-ի N 2 արձանագրությունները և N 1 եզրակացությունը.

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող 1993 թվականի արտադրության OPEL OMEGA 2.6 մակնիշի 851 GR 61 պետհամարանիշի փոխադրամիջոցը /նույնականացման համար՝ WOL000066P1238252, հետագայում՝ գույք/ 189 000 (մեկ հարյուր ութսունինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել գույքի աճուրդ վաճառքի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից, քաղաքացի՝ Գոռ Հովհաննեսի Ալեքյանին /Անձնագիր՝ AL0401982,

տրված՝ 23.08.2023թ. 022-ի կողմից, հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Շիրակացի 39, հետագայում՝ Գնորդ/ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարքով գնորդի հետ կնքել գույքի առուվաճառքի պայմանագիր:

2. Պարտավորեցնել Գնորդին՝ սահմանված կարգով և ժամկետում վճարել գույքի ամբողջ արժեքը և գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<19>> օգոստոսի 2024թ.
քաղաք Մարալիկ